ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

3 ապրիլի 2012թ. թիվ 130

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», ԲՆԱԳԻՏԱԿԱՆ («ՖԻԶԻԿԱ», «ՔԻՄԻԱ», «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ») ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԴԱՍՎԱՐՆԵՐԻ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 15-ի թիվ 106-Ա/Ք հրամանով հաստատված ««Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն») առարկաների ուսուցիչների և դասվարների «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի անցկացման կարգը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն») առարկաների ուսուցիչների և դասվարների՝ «Լավագույն ուսուցիչ” մրցույթի մարզային փուլի անցկացման նպատակով ստեղծել մարզային գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ Է.Մացակյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2012թ. ապրիլի 3
ք.Վանաձոր